



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

34

7-11

1931


Ռ. Ս. Դ. Բ. Կ.  
(ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ)

Գ Ո Ր Ծ Ը



34  
2-11

ԴԵՆԻ



34  
2. II 4


07 FEB 2010

Ռ. Ս. Գ. Բ. Կ.  
(ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ)  
Գ Ո Ր Ծ Ը

1469

1577  
38

ՊԵՏԼՐՈՏ 1931  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն



Պետերատի տպարան  
Իրան, № 6303 (բ)  
Հրատ. № 1516  
Պատ. № 1903  
Տիր. 10.000



## ՍԵՂԱԴՐԱԿԱՆ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԾԱՆԻ, ՅԵՐԻ, ԻԿՅԻ, ՍՈՒԽԱՆՈՎԻ ՅԵՎ ՈՒՐԹՆԵՐԻ ՄԵՆՁԵՎԻՊԵՆՆԵՆ  
ՀԱՅԵՆԵՂԱՓՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

«Արդյունաբերական կուսակցություն» դատավարությունը ամբողջ աշխարհի առաջ մերկացրեց ինտերվենցիայի այն սեպ վաճանգը, վորի սպառնալիքի տակ և գտնվում ԽՍՀ Միությունը և ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը: «Արդյունաբերական կուսակցություն» դատավարությունը միաժամանակ յերևան բերեց այդ հակահեղափոխական կուսակցության կապը նույնպիսի հակահեղափոխական այլ կազմակերպությունների և չեզոքական չեղքների իմպերիալիստական բուրժուազիայի հետ, վորը հետապնդում և նույն նպատակը՝ զինված ինտերվենցիան: Կուլակների գասակարգային շահերը արտահայտող Չայանով-Կոնսրասյեվի հսերական կուլակային խմբակը (աշխատավորական դյուղացիական կուսակցությունը) նման կուսակցություններից մեկն էր: Այդ չեղքու հակահեղափոխական խմբավորումները՝ Ռամզիևի յեվ Չայանով-Կոնսրասյեվի խմբակը, չհամարելով իրենց սոցիալիստական, նպատակ էլին զրել՝ ոտարերկրյա իմպերիալիստական բանգանների ներխուժման միջոցով վերականգնել ԽՍՀՄ-ում կապիտալիստական իրավակարգը:

Նույն նպատակն էր հետապնդում նաև Յ-րդ հակահեղափոխական կազմակերպությունը՝ ռուսական մենշևիկական սոցիալ-դեմոկրատների խմբակը, վոր ղեկավարում էր Ռ. Ս. Դ. Բ. Կ. (մենշևիկների) կենտրոնական կոմիտեյի, այսպես կոչված, «Մի-ութենական բյուրոն»:

Նախկին մենշևիկյան կազմակերպության բեկորներից քաղաքական գործունեությունը վերադարձած առանձին մենշևիկներից բաղկացած այդ հակահեղափոխական կազմակերպու-

Թյունը, վորը վերջնականապես ձևակերպվել է 1928 թվի սկզբում, վերականգնել եր իր հին կապերը արտասահմանի եմիգրանտ մենչևիկների կենտրոնի հետ (Իսահի, Ս. Բրամսոփի, Գաբրիել խմբակը), նույնպիսի քաղաքական կազմակերպչական և նյութական (զրամական միջոցներ, ստանալու բնագավառում) անմիջական կապ եր հաստատել «Արդյունաբերական կուսակցության», ինչպես և Ջայանովի խմբակի հետ, սակայն վերջինից նա տարբերվում եր նրանով, վոր շարունակում եր քողարկվել սոցիալիստական ֆրագեոլոգիայով, շարունակում եր ձևի համար անջատվել ինտերվենտներից Այդ չեքեք հակահեղափոխական խմբաժողովները միացել ելին հետևյալ պլատֆորմի շուրջը՝

- ա) վերականգնել կապիտալիստական հարաբերությունները ԽՍՀՄ-ում, հակահեղափոխական հեղաշրջման միջոցով.
- բ) հենվել ինտերվենցիայի վրա, վորպես խորհրդային իշխանությունը հապալելու միակ հնարավոր և ամենակարճ ուղի.
- գ) վնասարարություն, վորպես հակահեղափոխական աշխատանքի հիմնական մեթոդ ԽՍՀՄ-ի ներսում և կազմալուծող աշխատանք բանակում.
- դ) ստանալ նյութական միջոցներ միևնույն աղբյուրից՝ «Առևտրա-արդյունաբերական կոմիտեից».
- զ) կազմակերպչական կապ հաստատել արևմտյան բուրժուազիայի կառավարող և 2-րդ ինտերնացիոնալի ղեկավար շրջանների հետ.

Մենչևիկ սոցիալ-դեմոկրատների կողմից հակահեղափոխական կազմակերպությունների՝ արդյունաբերական բուրժուազիայի («Արդյունաբերական կուսակցություն») և եսերական կուլակային խմբակի (Կոնսոբայեվ-Ջայանով) հետ գաղափարական կազմակերպչական անմիջական ըլով հաստատելու և այդ կազմակերպությունների՝ միջազգային իմպերիալիստական զինված ուժով աշխարհիս առաջին պրոլետարական պետությունը տապալելու, սոցիալիստական հեղափոխությունը խեղդելու սլատրաստականություն մ. Վ չեքեան յեկավ պլոմյան սոցիալ-դեմոկրատիայի ամբողջ բուրժուական կուլությունը, մի կուսակցության, վորը շարունակում եր խոսքով ինտերվենցիան ժխտելու յերկերեսանի քաղաքականությունը, իսկ գործնականում ակտիվ մասնակցում եր ինտերվենցիայի նախ պատրաստմանը, արտասահմանի իմպերիալիստական բուրժուազիայի և նրա դործակալների հետ միասին ԽՍՀՄ ներսում:

ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահությունը 1931 թ. փետրվարի 15-ի վորոշման համաձայն ՌՍՖՍՀ դատախազությունը ուստական մենչևիկների բուրժուական հակահեղափոխական կենտրոնական կազմակերպության, այսպես կոչված «Ռ. Ս. Գ. Բ. Կ. կենտրոնական կոմիտեի «Միութենական բյուրոյի» գործը հանձնել է ԽՍՀՄ Գերագույն դատարանի Հատուկ ստյանի քրեությունը:

I.

Մենչևիկ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԿՆ ԿԵՆՏՐՈՆԿԱՆ ԲՈՒՐՇՈՒՅԱԿՆ ՀՈՎՈՐՆԵՂՈՓՈՒՅԱԿՆ ԿՈՆՍՊԻՐԱՏԻՎՈՒՄԵՆԸ

Չախջախվելով քաղաքական բաց պայքարում, վոր քաղաքացիական կոմիտեի առաջին տարիներում մղում եր խորհրդային իշխանություն դեմ, այլ և ԽՍՀՄ մեջ սոցիալիստական շինարարություն հնարավորությունը բացարձակապես և սկզբունքորեն ժխտելով, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը հասել է մինչև այն դրություն, վոր ծրագրում է վերականգնել կապիտալիստական հարաբերությունները: Այդ կուսակցությունը գեո 1924 թ. հետեյալ կերպով եր ձևակերպում հիմնականում իր ծրագրային և տակտիկական դրույթները՝ լույս ընծայած «Ռ. Ս. Գ. Բ. Կ. պլատֆորմ»-ի մեջ:

Նկատի ունենալով, վոր «Ռուսաստանում արտադրական հարաբերությունները, շնորհիվ զարգացման որչեկտիվ ընթացքի, որ սրի վրա վերափոխվում են կապիտալիստական հիմունքներով և բալլեիկյան տնտեսավարության հետևանքով մասնավոր, ինչպես ուստական, այնպես և ոտարերկրյա կապիտալը անխուսափելիորեն պիտի զրավի տնտեսական դիքերը» («Պլատֆորմ»-ի էջ 52), վոր ընդհանրապես «հասարակության իսկական սոցիալիստական վերակառուցումն հնարավոր և պրոլետարիատի համար միայն դեմոկրատական պետական իրավակարգի շրջանակներում» (էջ 47), մենչևիկական պլատֆորմը պահանջում եր՝

- ա) ներքաղաքական բնագավառում հանրապետական դեմոկրատական կարգեր, ընդունելով խորհրդային իրավակարգը, վորպես անցողական շրջանի մի ձև, խորհուրդների «ազատ» վերընտրությունների հիմունքներով.
- բ) արդյունաբերական բնագավառում պահել պետության ձեռքում միայն մենաշնորհի բնույթ ունեցող ձեռնարկությունը:

ներքե և արդյունաբերութեան հիմնական ճշուղերում՝ խոշորագույն ձեռնարկութեանները, մի պայմանով, «յիթե պետութեանը հնարավորութեան ունի կառավարելու այդ ձեռնարկութեանները», իսկ մնացածները վերադարձնել նախկին տերերին:

դ) գյուղատնտեսութեան բնագավառում հողի փաստական ապագադպանցում, «վերապահելով առանձին տնտեսներին իրավունք տնորինելու իրենց ոգտագործութեան տակ գտնվող հողերը, իսկ տեղական ինքնավարութեան մարմիններին նախապատվութեան իրավունք տալ ոտարվող հողը ձեռք բերելու», և

զ) առևտրի ապագադպանցումն ներքին մասնավոր ազատ առևտրի հիմունքներով, միաժամանակ վերացնելով արտաքին առևտրի մենաշնորհը և սահմանելով նրա փոխարեն պետական կարգավորման ու մաքսային տուրքերի սխեման:

Կապիտալիստական հարաբերութեանների վերակառուցման այդ վորսը ծրագրերը մենշևիկյան սոցիալ-դեմոկրատիան քողարկում էր այն պատճառաբանութեամբ, վոր իբր թե ԽՍՀՄ-ում սոցիալիստական շինարարութեանը որչեպի վորեն անհնարին և իրագործել և առաջարկում էր իրականացնել այդ ծրագրերը, մի կողմից «համաձայնութեան գալով բոլոր այն խմբակների ու կազմակերպութեանների հետ, վորոնք հաստատուն կերպով նը վիրված են հեղափոխութեան» («Պրատֆորմ», էջ 50), մյուս կողմից՝ բանվորների մեջ ազդեցիկ մղելու միջոցով, համախմբել իրենց դրոշի տակ բանվոր դասակարգի առաջավոր տարրերը և ամեն կերպ աջակցել բանվորական տարերային շարժման քաղաքական ձևակերպմանը և վերոհիշյալ «հերթական պահանջները» (էջ 47) բանվորների կողմից ըմբռնելուն:

Այդպես էր իր ծրագրային և տակտիկական դրույթները մենշևիկյան սոցիալ-դեմոկրատիան վորոշել 1924 թվին: Սակայն կյանքը տապալեց այդ բոլորը: Սոցիալիստական շինարարութեան հետևանքով ԽՍՀՄ տնտեսական զարգացումն ընթացավ այլ գծով՝ հակառակ մենշևիկների նախագուշակումների: Սոցիալիստական արդյունաբերութեան ընդհանուր արտադրութեան անումը, վորը հնգամյակի 3-րդ տարում լերկու անգամ գերազանցում է մինչպատերազմյան արդյունաբերութեան արտադրանքը, ինչպես տրեխայի նոր գրգանտների կառուցումը, միմիայն 1931 թ. ընթացքում արտադրութեանը 3 անգամ ավելացնելու վերաբերյալ ծրագրերը մինչպատերազմյան արդյունաբերութեան համեմատութեամբ, ժողովրդական տնտեսութեան ընդհանուր հաշվեկշիռի մեջ

մասնավոր, ինչպես ուստեղան, նույնպես և ոտարերկրյա կապիտալի նշանակութեան իսպառ վերացումը, — ահա այդպես և ԽՍՀՄ բանվոր դասակարգը պատասխանել բուրժուական մենշևիկյան նախագուշակումներին արդյունաբերութեան վերաբերմամբ:

Կոտնտեսութեան շինարարութեան ու խորհրտնտեսութեանների վիթխարի անումը, գյուղատնտեսութեան ինդուստրացումն մեքենա-տրակտորային կաշանների միջոցով, հացահատիկային հիմնական շրջաններում գյուղացիական տնտեսութեանների ճընշող մեծամասնութեան կոլեկտիվացումը և այլ բազայի վրա կուլտիվութեանը վորպես դասակարգ լիկվիդացիայի շենթարկելը, ահա այս և չքավոր-միջակ գյուղացիական մասսաների պատասխանը մենշևիկների բուրժուական մարգարեչութեանը գյուղատնտեսութեան նկատմամբ:

Այս պայմաններում մենշևիկ սոցիալ-դեմոկրատներին թեում էր կամ ընդունել, վոր իրենց քաղաքական պլատֆորմը սխալ է և վերջ տալ խորհրդային իշխանութեան դեմ պայքարին, կամ ընդմիջա կապվել իմպերիալիստական բուրժուազիայի հետ և ընդունել ԽՍՀՄ դեմ զինված ինտերվենցիայի անհրաժեշտութեանը:

Մենշևիկյան սոցիալ-դեմոկրատիայի զարգացման պատճուխութեանը 1924—1930 թ. թ. ժամանակամիջոցում մի եկվուցիայի «խաղաղ» սկզբունքներից դեպի զինված ապստամբութեանը և զինված ինտերվենցիայի անհրաժեշտութեանը:

Մենշևիկների կենտրոնական կոմիտեյի «Միութենական բյուրոյի» կազմակերպութեանը, վորը քաղաքական ազդեցիկայի մեթոդներից անցել էր վասարարութեան մեթոդներին և ինտերվենցիայի նախապատրաստմանը, այլ եկվուցիայի բեկման մի մոմենտն էր հանդիսանում:

1901 թ. սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան անդամ, վորը իր կապերը չեր խզել մենշևիկական կուսակցութեան հետ և անմիջապես կապված էր նաև մենշևիկական կենտրոնի («Ռե-Ս. Բրամովիչ-Գարի») և «Միութենական բյուրոյի» հետ, հակահեղափոխական կազմակերպութեան ակտիվ գործիչ և մենշևիկների գործով դատի արված քաղ. եկվուցիա հակահեղափոխական մենշևիկական նշված շրջանի աշխատանքի այլ եկվուցիայի վորտը հիմնական մեթոդների մասին հեռակալ ցուցմունքն է տալիս՝

«1924—25 տարիները յես քսորված էյի Ռերայ և Տուչա. Մոսկվո վերադարձա 1928 թվին՝ համաձայն ամիս-

տիայի: Վերականգնելով այս չորս տարվա իմ բացակայու-  
թյան ժամանակ կորցրած կապերս ու ծանոթություններս,  
սկզբում լես միայն պարզեցի, վոր Մոսկվայում այդ տարի-  
ների ընթացքում, չնայած վոր ձերբակալություններ և  
պրաժախներ ելին տեղի ունենում, այնուամենայնիվ գոր-  
ծում եր անլեզակ կուսակցական մի խմբակ Տ. Ն. Կուզնե-  
ցովի գլխավորությամբ: Այդ խմբակը մոտավորապես 1925  
թվից սկսած արտասահմանյան Ռ. Ս. Դ. Բ. Կ. պատգամու-  
վորության գործակալը կամ հավատարմատարն եր հանդի-  
սանում: Խմբակն ստանում եր «Սոցիալիստիչեսկի վեստ-  
նիկ», կապակցություն ուներ արտասահմանի հետ, ուղար-  
կում եր թղթակցություններ և այնտեղից կուսակցական և  
այլ կարիքների համար դրամական միջոցներ ստանում»:

Միաժամանակ մեղադրյալ Իկովը և կազմակերպչական նախ-  
նների հանդիպեց.

«Խմբակի անդամների պատմածից և «Սոցիալիստիչես-  
կի վեստնիկի» ընթերցումից, վոր այն ժամանակ կանոնա-  
վոր կերպով ստացվում եր Մոսկվայում, մոտավորապես  
1929 թ. ինձ համար պարզվեց, վոր ընդհատակյանների,  
բառիս նեղ իմաստով, և այլ մենչևիկների միջև, վորոնք  
աշխատում ելին տնտեսական և պլանային հիմնարկներում  
և հաճախ պատասխանատու պաշտոններ ելին վարում, կա  
վորոշ մերձեցում և գործակցություն»:

Այդ լեզալ մենչևիկների և ընդհատակյա մենչևիկների կապը  
այնքան ել «անմեղ» չեր, ինչպես կարելի յեր յենթադրել:

«Սկզբում, շարունակում ե Իկովը, լես պատկերացում  
եյի ընդհատակյանների և մենչևիկ խորհրդային մասնազե-  
տների փոխհարաբերությունները, վորպես մի հարաբերու-  
թյուն, վոր գոյություն ունի մի կողմից անլեզալ ակտիվ  
կազմակերպություն, իսկ մյուս կողմից «լեզալ» սկզբունք-  
ներով քողարկվող, բայց վերջնականապես չձևակերպված  
այնպիսի մի կազմակերպության միջև, վորն ընդհատակ-  
յաններին հաճախ այս կամ այն արժեքավոր ծառայու-  
թյուններն եր մատուցում:

Ինչքան զիտում ելի Մոսկվայի կյանքը և ծանոթա-  
նում իրերի գրությունը, այնքան ինձ համար յողարկվում եր,  
վոր «լեզալ» սկզբունքներով քողարկվողները ընդհատակ-  
յանների դիմաց ավելի խոշոր ու ակտիվ դեր ելին կատա-

րում, նրանց ազդեցությունն անհամեմատ ավելի ուժեղ եր  
և նրանց նպատակներն ավելի հեռու ելին գնում: Համե-  
նայն դեպս, դրանց ուղիները խոշոր չափով տարբերվում  
ելին վերջինների ուղիներից: Խորհրդային հիմնարկու-  
թյունների մեջ աշխատելը նպատակ ուներ գրավել յերկրի կո-  
քերագույն տնտեսակա-ն կենտրոնները և ուղղություն  
առնել նրանց գործունեյության, «լեզալ» սկզբունքներով քո-  
ղարկվողների կազմակերպչների ու պլանների համեմատ:

Յեթե խոսել գլխավոր գործիչների, այն և՛ Գրոմեցի,  
Գրեգորովի, Շեբերի, Սակալովսկու, Սուխանովի մա-  
սին... նրանց շուրջը կենտրոնացել ելին մեծ բանակու-  
թյամբ համախոհներ, վորոնք թեպետ կազմակերպու-  
թյան մեջ չեյին մտնում, բայց, շնորհիվ իրենց աշխատանքի  
բնույթի և քաղաքական տրամադրությունների, զանվում  
ելին այդ անձանց ազդեցության տակ, կատարում և իրա-  
գործում ելին նրանց դիրեկտիվները»:

Իկովի 1931 թ. 18 շ ցուցմունքը:

Միաժամանակ լեզալ խորհրդային մենչևիկների այդ խմբակը  
անմիջական կապ եր հաստատել արտասահմանյան կենտրոնի հետ:  
Իկովը ցույց ե տալիս.—

«Ս. Ա. Ջեբեկովի 1928 թ. դարձանը  
Մոսկվա վերադառնալը, վորը շատ մոտ եր կանգնած Գրո-  
մեց Սուխանովի խմբակին և նամանավանդ հանդիպում-  
ները և զրույցները կուսակցական աշխատանքների համար  
արտասահմանից լեկած Ռ. Ս. Դ. Բ. Կ. կենտրոնական կո-  
միտեյի ներկայացուցիչ Բրոնցեսեյն-Վալերիանովի հետ,  
բացորոշ կերպով ապացուցում ելին «արտասահմանի» մեն-  
չևիկների ընդհատակյա կազմակերպություն և «Միութենա-  
կան բյուրոյի» մեջ յեղած անմիջական կապը: Յես միայն  
չեմ կարողանում ճիշտ վորոշել, թե արդյոք յերբ և ինչպես  
և յեղել ձևականորեն կազմակերպված այդ կենտրոնը, վորը  
կոչվում եր «Միութենական բյուրո», վորովհետև տեղեկու-  
թյուն չունեյի (և առանձին կարիք ել չեյի գտում) նրա  
լրիվ կազմի մասին, վորքան վոր նիստերին չեյի մասնակ-  
ցում: Գուցե միջոցով Բերլինից ստացված բանավոր գի-  
րեկախի առաջարկում եր ինձ սերտ կապ հաստատել «Մի-  
ութենական բյուրոյի» հետ, յեթե անհնարին ե անձամբ  
մտնել նրա մեջ»:

(Իկովի 1931 թ. 18/2 ցուցմունքը):

կազմակերպութեան արտաքին ձևերի փոփոխութեանը պահանջում եր հիմնական փոփոխութեան մտցնել և հին տակափայլի մեջ: Քաղաքական պրոպագանդայի և ագիտացիայի փոփոխութեան անհրաժեշտ է նաև բոլորովին այլ մեթոդներ:

Եկովբ ցույց և տալիս՝

«Միութենական բյուրոյի» գործունեութեան անբաղձ ընթացքում արտահայտված քաղաքական դժի նպատակն եր՝ կազմավորել չեքիբի ժողովրդական տնտեսութեան կյանքը, վիճեցնել սոցիալիստական վերակառուցումը և թմնն կերպրթուլացնել նրա տեմպերը. այդ տակտիկայի իսկապես աստառը ինտերվենցիայի որիննտացիան եր՝ վորպես միայնակ հնարավոր ուղին ավլայ ներքին և արտաքին քաղաքական պայմաններում և հասարակական ուժերի ավլայ փոխհարաբերութեանները աւլայութեամբ ազատելու չեքիբիբը կոմկուսակցութեան զիկտատուրայից, միաժամանակ հնարավորութեան տալով սուսական զեմոկրատիային ծավալել իր ուժերը քաղաքական ազատութեան և սոցիալիզմի համար պայքարելու գործում»:

(1931 թ. 18/II—ցուցմունքը):

Մյուս մեղադրյալների ցուցմունքները քայլ առ քայլ չեքիվան են հանում նույն կվոլուցիայի առանձին մոմենտները, կազմակերպչական բնույթ ունեցող առանձին ետապները, վորք անցել և մեղնիկյան հակահեղափոխական խմբակը մինչև նրա վերջնական ձեակերպումը, նաև պարզում են վլասարաբական ուլլատանքի մեթոդներն ու կոնկրետ ձևերը, բուրժուազիայի հակահեղափոխական խմբավորումների հետ քաղաքական բլոկ կազմելու ձևերը, ինչպես և այն դերը, վոր այդ կվոլուցիայի մեջ կատարել և արտասահմանյան մեղնիկյան կենտրոնը, վորն իր հերթին կազմված եր շ. բը ինտերնացիոնալի հետ. այս վերջինը միշտ համերաշխ գործել և մեղնիկյաների հետ, պրոլետարիատի զիկտատուրայի և կոմունիստական կուսակցութեան զեմո

Պետրանկի վարչութեան նախկին անդամ, այժմու մեղնիկյաների գործով գատի տրված, Բարիս Մարկովի, Բեռլայցիբե մեղնիկյաների կազմակերպութեան առաջին մոմենտների մասին տալիս և հետևյալ ցուցմունքը.—

«Մկսած 1928 թ. ս. գ. զեկավար կենտրոնը իրեն «Միութենական բյուրո» չեք անվանում: «Միութենական բյուրոն» ունեք իր նախադասութեանը, վորի մեջ ժողուն

կին Շեքը, Գրովանը, Գիեգբուրգը, Շեքեբը, Մուխոնովը: Բացի այդ, «Միութենական բյուրոն» ունեք մի շարք համեմատողներ՝ կազմակերպչական, ֆինանսական և ծրագրային: Հավանական և, վոր գոլութեան ունեյին և այլ համեմատողներ, բայց նրանց մասին չես տեղեկութեաններ չունեմ»:

(1931 թ. 19 II—ցուցմունքը):

Հակահեղափոխական մեղնիկյաների կազմակերպութեանները առաջին շրջանի զարգացման պատմութեան մասին, սկսած 1925 թ. մինչև 1928 թիվը, այսինքն մինչև «Միութենական բյուրո» կազմակերպվելը, ավելի մանրամասն ցուցմունք և տալիս մեղնիկյաների գծով գատի տրված Շեքը, վորը հին մեղնիկյան եր և մեղնիկյան խմբակների գլխավոր կազմակերպողն եր ԵՄՂՄ. ում:

Շեքը ցույց և տալիս.—

«Յես անցել եմ պետական ծառայութեան և աշխատել եմ մինչև նեպի սկիզբը Գլխատուրում: Այդ ժամանակ Ս. Ե. Տարասովի (Մարոզով) և Ռուսլանցիվի խմբակի կողմից առաջարկված եր չեղել ինձ մտնել «Բեկոլես»-ի ապագա վարչութեան կազմի մեջ, վորը արհեստակցական կոտակերացիայի մի տեսակն եր: Ինձ հուլանի չեք, վորք այդ գործը կազմակերպված եր մեղնիկյաների նախաձեռնութեամբ և այդ խմբակը գլխավորում եր Տարասովը, վորը ապրում եր անիզալ անցադրով, իսկ իրականում Ս. Ե. Տարասովը նիկոլայ Գավրիլովիչ Մարոզովը եր: Իմ կուսակցական մեղնիկյան աշխատանքի վերադառնալը փաստորեն պիտի հաշվել այն պահից, չեքը ծառայութեան մաս: Գուպը մեք բլիշի ուրիշ բլիշներին հետ իրագործում եր Մարոզովը: Նրանից չես լսել եյի, վոր Յենտրոսոյուզի հրահանգչական բաժնում գոլութեան ունի կուսակցական բլիշ: Ուրիշ բլիշներին մասին չես տեղեկութեան չունեմ»:

Այդ շրջանում «Բեկոլես»-ից դուրս կատարվող կուսակցական աշխատանքը նպատակ ունեք վերականգնել տպագրիչներին մեջ մեղնիկյան բլիշ: Ընդհանրապես բանվորական մեղնիկյան բլիշներ կազմակերպելու գործը հաջողութեան չունեցավ:

Մասայութեան անցնելով Պետրանկը, շարունակում կին կուսակցական աշխատանքը, սակայն սկիզբում նա նրպատաժար չեք, բայց և այնպես Պետրանկում ինձ հաջող

վեց հիմք դնել կուսակցական մենշևիկական բլիթի, նամա-  
նավանդ չեր վարչութիւն կազմի մեջ մտալ **Բեռլացկի՛ն**։  
Մյուս կողմից յես, ոգտագործելով այն կապերը, վոր ու-  
ներ Պետրանկը այլ հիմնարկո թլունների հետ, միջոցներ ե-  
յի ձեռք առնում, վորպեսզի այդտեղ եւ բլիթներ կազմա-  
կերպվեն։ Այլ հիմնարկութիւնների, իմ մասնակցութեամբ  
կազմակերպված, բլիթների անդամներից ինձ հայտնի չեն՝  
Յենտրոսոյուզում—Պետու՛նի՛նը, Կլագի՛սե՛վը, Շվեյցերը, Ա-  
սետրի ժողկուստում՝ Զարկի՛նը, Յակուբովի, մյուսնե-  
րին չեմ ճանաչում։ Գերժողտնտխորճում՝ Գի՛նգբուրգը,  
Յակալովսկի, մյուսներին չեմ ճանաչում։ Բլիթ կազմա-  
կերպելու մասին յես բանակցել եմ Գի՛նգբուրգի հետ, կար-  
նեմ 1925 թվին։ ԽՍՀՄ Պետպլանի բլիթը կազմակերպել ե  
Գրամանը, վորի հետ կապ եմ ունեցել, բայց այդ բլիթի  
կազմի մասին յես տեղեկութիւն չունեյի։ Տեղերում Պետ-  
բանկն իր ապարատի մեջ ուներ հետեյալ մենշևիկական  
կազմակերպութիւնները։ Պետբանկի նիժեգարոզկի գրա-  
սենյակում իմ մասնակցութեամբ կազմակերպվել ե բլիթ,  
վորը ղեկավարում եր հին մենշևիկ, հնուց ինձ ծանոթ,  
Վ. Պ. Բելլայե՛վսկի՛ն։ Այդ բլիթի մեջ, վորքան ինձ հայտնի չե,  
մտնում եր հաշվապահ Դոբրի՛նի՛նը, մյուսների ազգանուն-  
ները չգիտեմ։ Բլիթի կազմը 10 հոգուց ա՛վելի չեր։ Պետ-  
բանկի շաշտարխանի բաժանմունքում փոքրիկ բլիթ կար,  
3-5 հոգի։ Պետբանկի Լենինգրադի ե Զիտայի ապարա-  
տում գոյութիւն ունեցող մենշևիկական բլիթները մասին  
յես լսել եմ **Բեռլացկի՛ն**։ Այդ շրջանները նույնպէս ղեկա-  
վարում եր **Բեռլացկի՛ն**։

(1930 թ. 30 XI—ցուցմունքը)։

Արտասահմանյան կենտկոմի հետ կապը ուժեղացնելու մա-  
սին ա՛վելի մանրամասն ցուցմունք ե տալիս **Շեքը**։

(1930 թ. 30 XI—ցուցմունքը)։

«Մինչև 1926 թ. արտասահմանյան կի-ի հետ կապը  
պահպանվում եր գրագրութեան միջոցով, սգտագործվում  
էին առանձին բանկերի գրասենյակների հասցեները ե  
զբանց միջոցով ել յես գրութիւններ էյի ստանում կի-ից։  
Նամանակով գրագրութեան համար այդ կապը այնքան ել  
կայուն չեր, ուստի հարց ծագեց այն մա-ին, վոր կի-ի  
ներկայացուցչութիւնը անհրաժեշտ ե փոխադրել Ռուսաս-

տան։ Յես խնդրել ելի **Բ. Մ. Բեռլացկի՛ն** այդ նարքը  
ըննել Դա՛նի ե Ս. Բրամովիչի հետ։ **Բեռլացկի՛ն 1926 թ.**  
չերկրորդ կիսում պիտի մեկնէր Ամերիկա։ Վերադառնալով  
Ամերիկայից, նա հայտնեց ինձ, վոր Բերլինում տեսակցու-  
թիւն ե ունեցել Դա՛նի ե Ս. Բրամովիչի հետ ե նրանք  
խնդրել են հայտնել, վոր կի-ի ներկայացուցչութիւնը  
զրկում ե ինձ վրա։ Միաժամանակ նրանք հայտնեցին, վոր  
կի-ն միանգամայն հավանութիւն ե տալիս գլուղատնտե-  
սական կոոպերացիայի խմբակների հետ բլիթ կազմելու աշ-  
խատանքն էլին, շատ դժգոհ ե կուսակցական աշխատանքի  
տեմպերից ե անհրաժեշտ ե համարում ԽՍՀՄ ժողովրդական  
տնտեսութեան զանազան ճյուղերում տարնել կազմալուծող  
աշխատանք, քանի վոր այս կամ այն հիմնարկութեան ղե-  
կավար շրջաններում մենք բլիթներ ունենք։ Այս պատաս-  
խանը միանգամայն զարմացրեց ինձ, քանի վոր կազմա-  
լուծող գործողութիւնները մինչև այժմս մենշևիկիկների  
ձրագրի մեջ չէյին մտնում։ Բայց այնուամենայնիւ յես վո-  
րոշեցի միանգամ եւ ստուգել այդ հայտարարութեան ճշտու-  
թիւնը ե, ոգտվելով այն հանգամանքից, վոր **Ս. Պ. Պե-  
տու՛նի՛նը** պիտի մեկի շարտասահման, ազգանշան տվի նրան  
Դա՛նի հետ ծանոթանալու համար «Պյոտը Պետրովիչը ա-  
ռողջ ե ե ամեն ինչ կարգին ե» ե խնդրեցի ղեկուցել «Յենտ-  
րոսոյու զում» տարած աշխատանքների մասին (կուսակցա-  
կան)։ Ա դ գեպը տեղի չե ունեցել 1927 թ. աշնանը։ Ար-  
տասահմանից վերադառնալով, **Պետու՛նի՛նը** հայտնեց ինձ,  
վոր տեսակցութիւն ե ունեցել Դա՛նի հետ կաֆեյում ե  
այդ հանդիպմանն աջակցել ե Բերլինի Յենտրոսոյուզի ներ-  
կայացուցչութեան մեջ աշխատող **Շուրի՛գի՛նը**։ **Պետու՛նի՛նը**  
միջոցով ստացված Դա՛նի պատասխանը նույնպէս զրական  
եր։ Գործնական ցուցումներ տալու համար նա պետք ե  
ինձ դիմեր։ Այնուհետև մտաւ վորպէս 1927 թ. վերջերից  
յես հաստատուէ կերպով սխեցի համապատասխան ղիբիկ-  
տիլներ տալ ե ինքս ել իրաւորճում ելի Պետրանկում յեղած  
ժասանակս։

Ս կայն ԽՍՀՄ-ի ներսում մենշևիկական կազմակերպութեան  
կենտրոնի վերջնական ձևակերպուէր, Շեքի ցուցմունքի համա-  
ձայն, տեղի չե ունեցել ա՛վելի ուշ՝ 1928 թ. չերը արտասահմա-  
նից վերադարձել եր Ա. Գ. Կ. անդամ **Յուրովսկի՛ն**, վորը բերել

եր իր հետ բանավոր ու գրավոր սանկցիա նման կենտրոն կազմակերպելու մասին: Շեքը նույն ցուցմունքի մեջ ասում է.

«Կենտրոնը կազմվեց Մոսկվայի հիմնական բջիջներին ներկայացուցիչներին, այն է՝ Պետպլանի, ԳԺՏԹ-ի, ԽՍՀՄ Առօրյակում և Պետբանկի: Բացի այդ կիրառվում էր նաև կոոպտացիայի սկզբունքը: Կենտրոնի վերջնական կազմը հետևյալն էր՝ Գրոման, Գրիգորուբ, Ֆակուբովիչ, Զալկին, Ֆին-Ֆենոսայեվսկի, Սակալովսկի և յես—Շեքս: Կենտրոնը կազմելուց հետո իմ, վորպես կենտրոնի ներկայացուցիչ ղերս վերացավ: Կենտրոնի ղեկավար կորիզը բաղկացած էր Գրոմանից, ինձնից—Շեքից և սկզբում Գրիգորուբից, վորին հետագայում 1929 թ. կեսից փոխարինեց Զալկինը»:

(1930 թ. 30/XII - ցուցմունքը):

Այս առթիվ հարցաքննված Ֆուրովսկին 1930 թ. դեկտեմբերի 3 ին ցույց է տալիս.—

«Մոսկվայից Փարիզ գնալու ժամանակ յես մի քանի որով մնացի Բերլինում և այնտեղ ունեցա տեսակցություն գրոֆեսոր Վ. Վ. Լեոնովսկի հետ: Խոսակցությունից պարզվեց, վոր նա 1926 թ. կամ 1927 թ. սկզբից, ապրելով Բերլինում, հաղթվում էր սպիտակ եմիգրանտների, մասնավորապես մենչևիկներ՝ Օբրամովիչի, Գալիսի և, լեթև չեմ սխալվում, Գանի հետ: Մեկնելու նախորդակին Լեոնովսկի վր ինձ նարցրեց, կվերցնեմ յես արդյո՞ք նամակ Մոսկվայում Շեքին հանձնելու համար, քանի վոր այդ նամակը փոստով չի կարելի ուղարկել, իսկ ներկայումս ել հարմար առիթ չկա: Յերը յես ավի իմ համաձայնությունս, մեկնելու օրը նա ինձ հանձնեց ծրարի մեջ մի նամակ առանց հասցեյի, ասելով, վոր այդ նամակը «Շեքի և Գրոմանի քաղաքական բարեկամներին է»: Յես դանում ելի, վոր նամակը արտասանմանյան մենչևիկական կենտրոնիցն է: Ծրարի անկյունում մատիտով նշանակելով «Վ. Վ.—Վ. Գ.», յես այս նամակը բերի Մոսկվա և հանձնեցի Շեքին, լեթև չեմ սխալվում՝ Ֆինօդկոմատում, վերադառնալուցս մի քանի օրից հետո»:

(1930 թ. դեկտեմբերի 5 ի ցուցմունքը):

Վերջապես նույն առթիվ հարցաքննված Պետուցից ցույց է տալիս.—

«Մինչև «Միութենական բյուրո» կազմակերպելը և արտասանմանի հետ կապեր հաստատելը, ինձ հայտնի չէր, վար Ֆենտրոսոյուզում, ինչպես և Պետբանկում 1925 թվից գոյություն ունեն մենչևիկյան կազմակերպություններ: Վերջինիս մասին ինձ հայտնեց Շեքը 1926 թ.: Բացի այդ, նույն 1926 թվին կազմակերպվել է նախաձեռնող խմբակ՝ Շեքի, Գրոմանի և Գրիգորուբի կազմով: Ֆենտրոսոյուզի մենչևիկական կազմի մեջ մտնում էլին Պետուցից, Գրազի-ճեվ և Շվեյցեր: Նրանց միացնում էր «Սոցիալիստիչեսկի վեստնիկի» ընթերցումը: Թերթը բերում էր իր հետ Գրազիճեվը: Այս ժամանակամիջոցում կազմակերպությունը ուրիշ, ավելի ակտիվ աշխատանք չէր կատարում»:

«Հետագայում, ինձ հայտնի չեղավ, վոր Պետուցին, ԳԺՏԹ և Առօրյակումսում նույնպես դուրսվումն ունեն մենչևիկական ըլիջներ»:

«Կապը ՌՍԳԿ արտասանմանյան պատգամավորության հետ հաստատվել է Բեռլացկու միջոցով 1925 թ.: Նույն Բեռլացկու միջոցով պատգամավորությունը լիազորել էր Շեքին լինել իր ներկայացուցիչը ԽՍՀՄ-ում: Կապը արտասանմանյան պատգամավորության հետ ավելի ևս ամրացավ, յերբ յես 1928 թ. աշնանը մեկնեցի Գերմանիա: Շեքը հանձնարարել էր ինձ տեսնվել Գանի հետ Հանձնարարությունը յես կատարեցի և 1917 թ. վերջերին արտասանմանյան պատգամավորությունից դիրեկտիվներ բերի Շեքին, վորպես նրա ներկայացուցիչն, յերկու կունկրեա հարցերի մասին. 1) ՀԿ (բ) ղեմ պայքար մղելու գործում արոցկիստաներին աջակցելու և 2) յերկրի տնտեսական կյանքում ֆուսարար աշխատանք կազմակերպելու և ՌՍԳԿ վոչ անդամների մասնակցությամբ ֆուսարար կազմակերպություններ ստեղծելու մասին: Միաժամանակ Գանը հանձնարարեց ինձ հայտնել Շեքին, վոր կուսակցական և ֆուսարար աշխատանք տանելու համար արտասանմանյան պատգամավորությունը կուղարկի գրամական միջոցներ»:

(1931 թ 19/II—ցուցմունքը):

Պետուցիցը ամբողջովին պնդում է Շեքի, Բեռլացկու,

Իզուցման և ստուգման գործը, նաև «Միութենական բյուրո» կազմակերպելու մասին:

«ՌՍԴԲԿ կենտկոմի «Միութենական բյուրոն» կազմակերպվել է 1928 թ. սկզբում: Բյուրոյի կազմակերպման գործում ղեկավար դեր էր կատարում նախաձեռնող խմբակը, վարի մեջ մտնում էյին յերեք հոգի՝ Գրոմանը, Շերը և Գինգբուրգը: Բյուրոյի մեջ մտնում էյին այդ չնչայի կողմից կոոպտացիայի կարգով հրավիրված նախաձեռնող խմբակի բոլոր անդամները՝ Զալկինը, Պետուցինը, Յակուբովիչը, Շերը և Սակալովսկին, ինքը յնչայի, նաև Պոկոպը և Քից Գեոսայեվսկին, վորոնց նորից մասնակից էյին անում: Այսպիսով՝ բյուրոն սկզբում կազմված էր 10 հոգուց: 1929 թ. բյուրոյի մեջ մտավ և Սուխանովը: 1930 թ. բյուրոյի անդամ Շերը վախճանվեց»:

(1931 թ. 10 IV ցուցմունքը):

Միութենական բյուրոյի» ղեկավար գործիչներ Գինգբուրգը և Գրոմանը պնդում են նույնը:

Գինգբուրգը ցույց է տալիս.—

«Դեռ 1925 թ. ՌՍԴԲԿ արտասահմանյան պատգամավորության կողմից Շերը լիազորված էր լինել նրա ներկայացուցիչը ԽՍՀՄ-ում և այդ լիազորությունը նա ոգտագործում էր կուսակցական կազմակերպությունը վերականգնելու նպատակով: Հետագայում արտասահմանյան պատգամավորությունը Գրոմանի, Շերի, Իմ յեվ Եսուցինի, նաև արտասահմանյան պատգամավորության անդամներին ԽՍՀՄ ուղարկելու միջոցով կապ էր հաստատել միութենական կազմակերպության հետ ՌՍԴԲԿ արտասահմանյան պատգամավորության օջակցության շնորհիվ, նախաձեռնող խմբակը, վորին այդ ժամանակ հաջողվել էր գրավել մի շարք նոր անդամներ (Շերը, Սակալովսկի, Զալկինը, Պետուցինը), 1928 թ. գարնանը հրավիրեց խորհրդակցություն, ներքոնշյալ անձերի մասնակցությամբ և այստեղ վորոշվեց կազմակերպել ՌՍԴԲԿ կոոպտայի «Միութենական բյուրո»՝ Գրոմանի, Շերի, Գինգբուրգի, Շերի, Սակալովսկու, Քից-Գեոս-

այեվսկու, Զալկինի, Յակուբովիչի, Պետուցինի կազմով 1929 թ. հունվարից Բյուրոյի կազմի մեջ մտավ Սուխանովը, իսկ 1930 թ. ապրիլի վերջին գուրս լեկով Շերը»: Վերջապես Գրոմանը ցույց է տալիս՝


«Իմ հակահեղափոխական գործունեության սկիզբը պետք է հաշվել 1926 թ., յերբ Շերի հանդիպեցի և նա ինձ հայտնեց, վոր ԽՍՀՄ ներսում կուսակցական մենշևիկական կենտրոն կազմակերպելու համար նա ՌՍԴԲԿ արտասահմանյան պատգամավորության լիազորն է (լիազորությունը ստացել էր Բեռլացիու միջոցով): Շերը առաջարկեց ինձ մասնակցել այդ կազմակերպչական աշխատանքներին և յես համաձայնվեցի: Շերի հանձնարարությամբ Պետուցինում յես զբույց ունեցա Գինգբուրգի հետ, վորը լեկել էր այդտեղ կոնյուսուտուր խորհրդի նիստերին մասնակցելու: Յես հայտնեցի նրան Շերի առաջարկության մասին և տեղեկացրի, վոր այդ առաջարկությունն անում է ՌՍԴԲԿ արտասահմանյան պատգամավորությունը, վորը լիազորել է Շերին կուսակցական կենտրոն կազմակերպել (Բեռլացիին, վորը տվել էր այդ լիազորությունը, Շերի առաջարկությամբ Բերլինում տեսակցություն էր ունեցել Դանի հետ): Գինգբուրգը Շերի հետ տեսնվելուց հետո ցանկություն է հայտնում մասնակցելու այդ կազմակերպչական աշխատանքներին: Այդպիսով կազմվեց նախաձեռնող չեռայը, բաղկացած Շերից, Գրոմանից և Գինգբուրգից: Յեսայլը կոոպտացիայի կարգով լրացվեց նոր անդամներով և հետագայում ձեակերպվեց վորպես «Միութենական բյուրո»:

(1931 թ. 19/II ցուցմունքը):

1460

1511 38

Բացատրելով, թե ինչպես է կազմակերպվել կենտրոնում մենշևիկյան խմբավորման «Միութենական բյուրոն», մեղադրյալներն անցնում են տակտիկական այն նոր դրույքներին, վորոնք հակահեղափոխականոր կազմակերպության գործունեության հիմքն են կազմել: Ինչպես այդ լերևում է բոլոր մեղադրյալների ցուցմունքներից ու փաստաթղթերից, շատ շուտ արտահայտվեցին բոլորովին այլ կազմակերպչական ու տակտիկական տենդենցներ, քան այն, վորը ձեակերպված էր 1924 թ. «Պատ-



Ֆորմ-ի մեջ: Այդ տեսակետից արտասահմանյան կենտրոնների ղեկավարութիւնը վորոշ դեր եր կատարում: Գրումանը այս առթիվ շատ կարևոր ցուցմունք է տալիս 1930 թ. դեկտեմբերի 25-ին:

«ԽՍՀՄ դեմ պայքարելու գործում միջազգային սոցիալ-դեմոկրատիայի նախկին պրակտիկան, վորը ժխտում եր ինտերվենցիան և չեր կիրարկում ֆաստարարութիւնը, վորպես պայքարի մի մեթոդ, հիմնված եր—ա) այն համոզմունքի վրա, վոր սոցիալիզմի կառուցման փորձը ԽՍՀՄ-ի մեջ տնտեսագիտութեան կմախքով: բ) արագ ռացիոնալիզացիայի յենթարկվող և կազմակերպվող կապիտալիզմին կհաջողվի խազազ միջոցներով անտեսապես և ազա սոցիալ-քաղաքականապես լուծել Խորհրդային Միութիւնը («վոչ թե փայտով, այլ սուբլիմով»), ինչպես իր ժամանակ Լոյզ Զորցն եր հիմնավորում ինտերվենցիայից առևտրական համաձայնութեան անցնելու անհրաժեշտութիւնը»):

(1930 թ. դեկտեմբերի 25-ի ցուցմունքը):

Այդ տակտիկան այժմ խիստ փոփոխվել է:

«Քրուցեցեյի ասելով Գարդին անմիջական զրդիչն եր հանդիսանում Կառուցելու այն բոլոր յելուցթներէի, վոր նա ունեցել է ԽՍՀՄ դեմ և հանդես եր գալիս, վորպես ինտերվենցիայի կողմնակից: Ինչպես հայտնեց ինձ Քրուցեցեյը, Կառուցելու այդ տեսակետն ունեն յերկրորդ ինտեր-նացիոնալի ղեկավարներէից շատերը և Գերմանիայի սոցիալ-դեմոկրատիան, վորը գերմանական կոմկուսի և կոմինտերնի դեմ պայքարելու գործում որեցոր աճող դժվարութիւնների չի հանդիպում»:

«Նույն 1927 թ. յիրը յես Բերլինում տեսնվեցի մենչեիկ Գեքիելի ճետ, նրանից իմացա, վոր ակտիվ կապեր ունի գերմանական սոցիալ-դեմոկրատիայի հետ և շատ աջ է տրամադրված»:

«Նա ինձ տասց, վոր Գիլեբերգը ինտերվենցիայի հոսանքի ակտիվ կողմնակիցն է»:

«Նկատի ունենալով այդ բոլորը, ինձ համար այլևս զարմանալի չեր Պետուցիի հայտարարութիւնն այն մասին, վոր Բերլինում նա զրուցց է ունեցել Գառնի հետ 1927 թ. վերջերին, նաև այլ, ինչ վոր հայտնել է ՌՄԳԿ Կենտ-

կոմի «Միութենական բյուրոյին»: Նա հաղորդել է Գառնի այն դիրեկտիվ ցուցումի մասին, վորով առաջարկվում եր, բացի արոցկիստական սպարիցիային ակտիվ կերպով աջակցելուց, պայքարել բոլոր միջոցներով ՀԿԿ (բ) դեմ մինչև իսկ ինտերվենցիայով և կազմալուծող աշխատանքներ կատարելով»:

(1930 թ. 25/XII ցուցմունքը):

Վերջապես, հետագայում, 1926 թ. Գրումանը ցուցց է տալիս.—

«Ս. Բրումանովի, ինձ է ՌՄԳԿ Կենտկոմի «Միութենական բյուրոյի» մյուս անդամների հետ զրուցելիս մանրամասնորեն զարգացրել է պատճառաբանել և պայքարի տակտիկայի փոփոխումը: Այստեղ արդեն ֆաստարարութեան և ինտերվենցիայի խնդիրը նա, վորպես ՌՄԳԿ Կենտկոմի պատգամավորութեան ներկայացուցիչ, լուսաբանում եր վորոշակի կերպով և համառորեն: Ս. Բրումանովի պարզ կերպով ինձ ասաց, վոր այդ բեկմանը տակտիկայի մեջ հաճանութիւն է տալիս, ինչպես զերմանական սոցիալ-դեմոկրատիան, նույնպես և II ինտերնացիոնալը: Նա մատնանշեց, վոր Բերլինից ԽՍՀՄ մեկնելուց առաջ, ակզի ունեցալ զազանի խորհրդակցութիւն Ս. Բրումանովի, Գառնի, Գալիցի, Գիլեբերգի լեվ Քրուցեցեյի մասնակցութեամբ: Խորհրդակցութիւնը զբաղանապես լուծեց նոր տակտիկական խնդիրները, վորոշում կայացրեց ֆինանսական ոգնութիւն և կազմակերպչական աջակցութիւն ցուցց տալ տակտիկական նոր կուրսը իրականացնելու համար»:

(1930 թ. 24—25/XII ցուցմունքը):

Նույն հարցի մասին ցուցց է տալիս Սուխանովը:

Սուխանովը իր 1931 թ. փետրվարի 19-ին ալած ցուցմունքի մեջ բացատրում է.—

«Ինձ համար միանգամայն պարզ եր ՌՄԳԿ-ի արտասահմանյան Կենտկոմի դիրքը ինտերվենցիայի հայցի նկատմամբ: Ինչպես Կենտկոմը, նույնպես և II ինտերնացիոնալը, բացորոշ կանգնած էլին ինտերվենցիայի տեսակետի վրա և իմ այդ համոզմունքը հիմնված եր ինչպես այն ցուցմունքների, վորոնք «Միութենական բյուրոն» սասանում եր ՌՄԳԿ-ի արտասահմանյան Կենտկոմից, նույնպես և II

ինտերնացիոնալի ամբողջ պատմութեան վրա, նամանավանդ 1925 թ. Մարսելի կոնգրեսից սկսած»: Այնուհետև Սուխա-  
նովը ցույց է տալիս՝

«Արտասահմանյան մենչեիկները մեջ ինտերվենցիայի հարցի մասին անկասկած տարբեր կարծիքներ գոյություն ունեյին: Այլ խմբակը (Պոստետով, Յերեսեյի, Գարվի) միշտ ինտերվենցիայի գաղափարի ակտիվ կողմնակիցներն էր: Կենտրոնական խմբակը՝ Դոն, Ս. Բրամովիչ, Յուզով, վորը պաշտոնապես գլխավորում էր արտասահմանյան պատգամա-  
վորությունը, մինչև վերջին ժամանակներս համաձայն չեք ինտերվենցիային, սակայն փաստորեն նրա քաղաքականու-  
թյունը անկասկած ինտերվենցիոն բնույթ էր կրում»:

(1931 թ. 20/II ցուցմունքը):

Այդպես, մենչեիկների արտասահմանյան կենտկոմի և II-րդ ինտերնացիոնալի անմիջական ճնշման տակ ձևավորել և իբր ինտերվենցիոն քաղաքական դրույթները հակահեղափոխական մեն-  
չեիկական կազմակերպությունը ևՄՀՄ-ում, վորը վերջնականա-  
պես ձևակերպվել է, վորպես «Միութենական բյուրո» 1928 թվի սկզբին:

## II

### ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԿԱԶՄԸ, ՆՐԱ ԿԱԶՄԵՐՊՉՈՎՈՆ ՍՅՐՈՒԿՑՅԱԲՈՆ ՑՈՎ ԳԵՎՈՎՈՐ ՀԵՎԵՆԵՂԵՓՈՒՄԵՎՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսական մենչեիկ սոցիալ-դեմոկրատների «Միութենական բյուրոն» վերջնականապես կազմակերպվեց 1928 թ. սկզբին: Բո-  
լոր մեղադրյալների ցուցմունքների համաձայն «Միութենական բյուրոյի» կազմակերպման թվակերը 1928 թ. փետրվար ամիսն է, չեք և վորոշվեց վերջնական նրա կազմը՝ Գրոման, Շեք, Շեքե, Գիեգբուրգ, Սակալովսկի, Պոլկով, Պետուցի, Յակու-  
բովի, Զալկինգ, Էիե-Օնոսայեվսկի:

1929 թ. Գրոմանը հրավիրեց Սուխանովին: Ապրիլին մա-  
հացավ նրա կազմի անդամ Շեքեքը: Այս էր «Միութենական բյու-  
րոյի» կազմը: Սակայն նրա նիստերին հաճախ հրավիրվում էին  
այնպիսի անձինք, վորոնք Բյուրոյի կազմի մեջ չէին մտնում,  
բայց տեղյակ էին նրա գործունեությունը և աջակցում էին այս  
կամ այն ձևով: Իրանցից պետք է նշել Ռուբինի և Բազարովի:

«Միութենական բյուրոյի» ընթացքի գործունեությունը, կազմա-  
կերպչական աշխատանքները ղեկավարելու, պլենումները նախա-  
պարարտելու, արտասահմանյան կենտկոմի և այլ կազմակեր-  
պությունների հետ հարաբերությունները վարելու համար «Միութ-  
ենական բյուրոն» հիմնեց ղեկավար հնգյակ՝ Գրոմանի, Սու-  
խանովի, Շեքի, Գիեգբուրգի և Շեքեի կազմով:

«Միութենական բյուրոն» նույնպես կազմակերպչական խմ-  
բակ ուներ, վորը կապ էր պահպանում տեղական ցանցի հետ:  
Խմբակի մեջ մտնում էին՝ Շեքեք, Պոլկով, Պետուցի և Շալ-  
կինգ: Բյուրոյի քարտուղարի ֆունկցիաները կատարում էր Շեքը:  
Վերջնական, կուսակցության ծրագիր կազմելու համար հիմնվեց  
ծրագրային հանձնաժողով, վորի նախագահն էր Բազարովը, իսկ  
Գրոմանը, Սուխանովը, Գիեգբուրգը և Ռուբինը անդամներ  
էին: Ֆինանսական գործերը հանձնված էին Գրոմանին, Շեքե-  
քին և Շեքին: Տեխնիկային վերաբերող գործերը տանում էին  
Շեքեքը և ապա Յակուբովիքը:

(12/II ցուցմունքը):

«Միութենական բյուրոյի» կազմակերպչական այդ ստրուկ-  
տուրան միաձայն պնդում են բոլոր մեղադրյալները:

Համաձայն Շեքի ցուցմունքի «Միութենական բյուրոն» իբր  
ամբողջ գործունեություն ընթացքում ունեցել է 3 պլենում— 1928,  
1929 և 1930 թվականներում: Առաջին պլենումը տեղի չէ ունեցել  
գարնանը, մոտավորապես մարտ—ապրիլ ամսում, Շեքեքի բնա-  
կարանում: Որակարգի մեջ զրված էին հետևյալ հարցերը՝ 1) Ծ-  
ամյակի նախագծերը (Գրոմանի գեկուցումը): 2) Հակահեղափո-  
խական հարևան կազմակերպությունները (Գրոմանի գեկուցումը)  
և Սորհրդային իշխանության դեմ ուղղված գյուղացիական շարժ-  
ման մասին (Շեքի հարակից գեկուցումը): 3) Աշխատանքները  
կազմավորվելու հարցը, ինչպես քաղաքավարություն համար մեն-  
չեիկները անվանում էին իրենց փաստարար աշխատանքը: Այդ  
բոլոր գեկուցումների առթիվ գործնական բանաձևեր ընդունվե-  
ցին: Որինակ, առաջին գեկուցման առթիվ բանաձևը, տարով հըն-  
դամյակի նախագծի ընդհանուր գնահատականը, նախագծի, վորը  
խորհրդային իշխանության ամրապնդելու տեսակետից խիստ կա-  
րևոր մի միջոց էր հանդիսանում, առաջարկում էր այդ հարցի  
նախնական մշակման ժամանակ խոչընդոտներ ստեղծել, վորպեսզի  
հնգամյակը չիրագործվի և լամեն կերպ ընդդեմ այն դժվարու-

թյունները, վորոք կազմած էին այդ պլանը իրականացնելու հետ, կանգ չառնելով հետին նպատակներով փաստերը դասավորելու և ժշակելու առաջ)։

(Շեքի 19/II ցուցմունքը)։

Յերկրորդ հարցի առթիվ բանաձևը առաջարկում էր ցանցային կազմակերպութուններին հետամուտ լինել գյուղացիական շարժման ընթացքին և կապ հաստատել աշխատավորական գյուղացիական շարժման ներկայացուցիչների հետ։ Նույնն առաջարկում էր և բանաձևը 3-րդ հարցի առթիվ։ Տարվ կազմավորվող աշխատանքների ընդհանուր բնույթը, պլենումը համաձայնարարում էր «Միութենական բյուրոյին» անցնել ֆուտուրարության գործնական կիրառմանը։

Յերկրորդ պլենումը տեղի չէ ունեցել 1929 թ. մոտավորապես սեպտեմբեր ամսում, Գրոմանի բնակարանում։ Գննվել են նույնպես 3 հարց՝ 1) Կոլտնտեսական շարժումը և նրա հետանկարները, 3) Շերտափորումը ՀԿԿ (բ.) ներսում և աջ թեքման ոգտագործումը ՌՍԴԲԿ շահերի համար և 3) ՌՍԴԲԿ վերաբերմունքը գեղի ինտերվենցիան։

Առաջին կետի մասին զեկուցել և ինքը Շեքը, իսկ 3-րդի՝ Գրոմանը, 2-րդ հարցի մասին զեկուցողի անունը Շեքը չի հայտնում։ Ընդունվել են հետևյալ վորոշումները։ 1-ին կետի առթիվ առաջարկվում էր ուժեղացնել կապը Կոնսոսայեվ-Չայնովի կուլտային-տեսական խմբակի հետ (ԱԳԿ), մասնավորապես կապ հաստատել գործնական աշխատանքի բնագավառում, վորպեսզի, ինչպես ցույց և ապրիտ Շեքը, «հնարավոր աշակցություն ցույց տալ այդ կուսակցությանը գյուղացիական ապստամբություններ կազմակերպելու գործում»։

(19/II ցուցմունքը)։

2-րդ կետի առթիվ առաջարկվում էր ամեն կերպ ոգտագործել աջ թեքումը, իրագործելով կոմունիստների վերաբերյալ այսպես կոչված, չեղոքացման տակտիկան։

Վերջապես 3-րդ կետի առթիվ բանաձև և ընդունվել վորով «ինտերվենցիան գնահատվում էր, վորպես խորհրդային իշխանության ներքին և արտաքին քաղաքականության անխուսափելի մի հետևանք և ինտերվենցիան անկախ ինտերվենտների անհատական կամ թից գնահատվում էր, վորպես զրական աշակցության արժանի մի յերևույթ, վորը պիտի ոգտագործեր ՌՍԴԲԿ։ Գրոմանի

հետ միասին այդ հարցի առթիվ, վորպես հարակից զեկուցող Սուխոեովը էր, վորը կանգնած էր նույն տեսակետի վրա»։

Վերջապես 3-րդ պլենումը կապցել և 1930 թ. ապրիլ ամսում Փելուզկովի բնակարանում Պետրովսկու պարկում։ Որպեսզի հետևյալն էր՝

1) Ղեկավար գծի հաղթանակը ՀԿԿ (բ.) ներսում և ՌՍԴԲԿ աշխատանքների հեռանկարները։

2) Հնգամյակն իրագործելու հետ կապված գեղարություններն ոգտագործելը։

3) Արդյունաբերական կուսակցության ինտերվենցիայի մասին համաձայնություն կնքելը։

4) ՌՍԴԲԿ Բանվորական կուսակցության վերանվանելը։

Առաջին հարցի մասին զեկուցել և Սուխոեովը և այդ առթիվ ընդունված բանաձևը արձանագրում է, վոր «ՌՍԴԲԿ ուղարկելու մարտական մեթոդները, կազմավորվող աշխատանքները և ինտերվենցիայի նախապատրաստումն անհրաժեշտ և ուժեղացնելը», նկատի ունենալով զեկավար գծի հաղթանակը։ 2-րդ կետի առթիվ կապցած բանաձևը նույն բովանդակությունն ունի։ Ղեկուցողն էր Գրեգորովը։ 3-րդ կետի վերաբերյալ Գրոմանի զեկուցման առթիվ ընդունված բանաձևը, զրական գնահատական ապրով ինտերվենցիային, հավանություն էր ապրիտ «Արդյունաբերական կուսակցության» հետ կապված բոլորին։ Վերջապես 4-րդ կետի վերաբերյալ արտասահմանյան պատվիրակության առաջարկը՝ վերանվանել ՌՍԴԲԿ Բանվորական կուսակցության, միաձայն չանցավ և այդ հարցի գործնական լուծումը համարվեց վաղաժամ։

Նշված վորոշումների բովանդակությունը վոր մի կասկած առաջ չի բերում, վոր մենշևիկ սոցիալ-դեմոկրատների «Միութենական բյուրոյի» գործունեյությունը ակտիվ և հակահեղափոխական բնույթ է կրել։

Համաձայն նույն Շեքի ցուցմունքի զիրեկտիվ վորոշումները «հետագայում «Միութենական բյուրոյի» և նրա հնգյակի կողմից իրագործվել են կյանքում և այդ վորոշումները հայտնվում էին տեղական բլիժներին և «Միութենական բյուրոյի» ցանցին՝ բանաձևերի կամ էլ շրջաբերական նամակների ձևով։ Բազմացնելու գործը վարում էին այն անձինք, վորոնք տեխնիկայով էին պարագում, իսկ ուղարկում էր կազմիմարակը»։

Խորհրդային հիմնարկության, մանավանդ տեղեկություններում, ֆարզավիզիաներում և ձեռնարկություններում մենշևիկյան բըլիշներ կազմակերպելու փորձերի մասին մեղադրյալները այն ցուցմունքն են առել, վոր մենշևիկյաների կողմից ուժեղ կազմակերպություններ ստեղծելու համար վոչ մի շանսեր չկային, վորի շնորհիվ ել ինչպես այդ ընդունում և և Գրոմանք:

«Կուսակցական բըլիշները փաստորեն կազմված էին այսպես կոչված պատասխանատու աշխատակիցներից, մի հանգամանք, վորը զգալի չափով նախավորողում եր և կուսակցական աշխատանքի տակտիկան»: «Մենշևիկյան կազմակերպության սոցիալական բազան խիստ սահմանափակ եր. նա բաղկացած եր մի խումբ անհատներից, վորոնք խորհրդային աղարատում պատասխանատու պաշտոններ էին վարում շնորհիվ իրենց մասնագիտություն և մասամբ էլ այն կադերի, վոր ունեցել են ՀԿԿ (բ) անդամների հետ ցարական շրջանում, ընդհատակյա աշխատանքներ տանելու ժամանակ»:

Մենշևիկյան կազմակերպությունը փորձեր չի արել մանելու գյուղացիական մասսայի մեջ: Գրոմանքի ցուցմունքով «Միութեանական բուրժուազիայի» վորոշում և կայացրել այն մասին, վոր «ապահուստություններ իր բն չկան, փաստորեն ուղղվում և դեպի միջակները, վորոնք ունեն լավ կազմակերպված տնտեսություն, վոր կարևորագույն կիրառվում և բուսություն և ստեղծվում և անկենսունակ տնտեսություններ, հետևապես անհրաժեշտ և ամեն կերպ աջակցել ազգաբնակչության բոլոր բողոքներին, դժգոհություններին ու ապստամբություններին, ոգտագործելով այն պրոլետարիատի գիկտատուրայի և խորհրդային իշխանություն ղեկ պայքարելու համար»:

Գործնականում, սակայն, մենշևիկյան կուսակցությունը վորոշել եր «իբ դիրքը ցուց չտալ և գործել վոչ մենշևիկյան կուսակցության անունից և դրանով և բացատրվում, վոր Սուխոտեովը թուուցիկ եր հրատարակել անանուն խմբակի կողմից: «Ընդունելով իր այդ թուուությունը և մասսաներից կտրված լինելու հանգամանքը, մենշևիկյան կազմակերպությունը չեր կարող կենտրոնացնել իր հակահեղափոխական աշխատանքի ծանրությունը ֆաստարություն, վորպես մի ամենից շատ նրան մատչելի մեթոդի վրա և այդ նա հենց ինքն էլ պարզ կերպով գիտակցում եր: Գրոմանք ցուց և տալիս»:

«Կազմված լինելով գլխավորապես պատասխանատու խորհրդային աշխատակիցներից, ինչպես վերը ասվեց, նքրանք իրենց տակտիկան, իրենց պայքարի մեթոդը պիտի մշակելին, չլինելով սոցիալական այդ նեղ բազայից, այստեղից էլ հետևում էին և պայքարի մեթոդները»:

ա) Հետին նպատակներով գնահատել տնտեսական

դրությունը, ընդգծել բացասական մոմենտները, բ) չեղարացնել առանձին կոմունիստներին, գ) պաշտպանել ՀԿԿ (բ) աշխատանքի բոլոր նախագծերը, դ) անցկացնել ձեռնարկություններ, վորոնք պիտի նպաստեին կոմունիզմի թշնամի ուժերին՝ մասնավոր ձեռնարկություններին (վարկ տալու և չեքեքներին, որենքն ոգտագործելու միջոցով), կուսակցային տնտեսություններին այն իմաստով, վոր նրանց համար սահմանված մեթոդների ծանր պայմանները խախտելու գնով ստեղծել այնպիսի դրություն, վոր նրանք հնարավորություն ունենան ստանալու արդ. ապրանքներ ու վարկ, նաև ազատել կամ պակասեցնել կուսակցային տնտեսությունների համար սահմանված հարկերը, այսինքն աղավաղել դասակարգային դիժը: Սխախտել և կազմալուծել շինարարություն արտադրություն, մատակարարման ու վարկի վերաբերյալ պլանները՝ ռեսուրսները պակասեցնելու, կամ նույնիսկ ծածկելու, նաև կեղծ կատարման ակնհայտի կուպիտ մեթոդներ ստեղծելու միջոցով, առանց հաշվի առնելու բարդացնող հանգամանքները: Ուժեղացնել խոչընդոտները, վորոնք իր բն հարկադրում են շեղվել պլաններից և այն, այսինքն այն բոլորը, վոր պետք և կոչվի կազմալուծող տակտիկա և վնասարարություն» (1930 թ. 15/12 ցուցմունքը):

Միանգամայն հասկանալի չե, թե ինչու «Միութեանական բյուրոն» այնքան թեթև կերպով և ընդունել արտասահմանյան կենտկոմի, ինտերվենցիայի վերաբերյալ, նոր գրությունները: Գրոմանքի ցուցմունքի համաձայն»:

«Յերբ ՌՍԴԲԿ կենտկոմի արտասահմանյան նամակից հայանի լեզվով վոր նա փոխել և իր դիրքը և ինտերվենցիան գտնում և անհրաժեշտ և կան շանսեր, վոր ինտերվենցիան համեմատաբար շուտ իրագործվի (Ֆրանսիա, Ահաստան), այն ժամանակ «Միութեանական բյուրոն», չնայած վոր Միությունը փաստորեն շրջապատված եր

դրաշղթայով, ընդունեց, վոր պրովետարիատի դիկտատու-  
բայի և խորհրդային իշխանութեան դեմ պայքարելու գոր-  
ծում ինտերվենցիան անհրաժեշտ մի միջոց է»:

Վոչ պակաս բնորոշ է Զալկինգի առաջին պլենումում տված  
կազմակերպչական հարցերի մասին ցուցմունքը: Բնորոշ է, վոր  
նա ցույց է տալիս, վոր այդ հարցի մասին զեկուցել և Շերը,  
վորը պլենումում քննութեան առնված հարցերի ցուցակում չի  
հիշատակում իր զեկուցման մասին:

Զալկինգը ցույց է տալիս.

«Կազմակերպչական չեղբորդ հարցի մասին զեկուցել  
և Շերը: Պլենումի նիստին այդ հարցի վերաբերյալ, վոր-  
պես նյութ ծանոթանալու համար, տրվել և արտասահման-  
յան Կենտկոմի նամակը (մեկ սրինակ), վորի մեջ նա տե-  
ղեկացնում էր ՌՄԴԲԿ-ի բայտը անդամներին, վոր կազմա-  
կերպված է «Սիուսթենական բյուրո», վորոշում էր Բյուրոյի  
անելիքները և կոչ էր անում ՌՄԴԲԿ տեղական կազմակեր-  
պություններ ստեղծել:

Շերի զեկուցման հիմնական թեզերը և այդ առթիվ  
տեղի ունեցած զիճարանությունները սրանք են. առաջին  
հարցը, վորը շոշափեց զեկուցողը—այդ սոցիալական բա-  
զայի խնդիրն էր, վորի վրա ներկայումս կարող է հուշ  
դնել ՌՄԴԲԿ, քանի վոր այդ հարցը լուծելուց հետո միայն  
կարելի կլիներ վորոշել կազմակերպութեան այս կամ այն  
ձևը: Այդ հարցը քննելիս յերևան լեկան լերկու տեսակետ՝  
առաջինը, վորի վրա կանգնած էր մեծամասնությունը, այն  
էր, վոր ներկայումս ՌՄԴԲԿ բանվորական կազմի, թեպետ  
մի վորևէ մասի վրա հուշ դնել—խոսք անգամ չի կարող  
լինել: Բանվորական մասսան այն չափով և գտնվում է ԿԿ(Բ)  
ազդեցութեան տակ, վոր վոչ մի հուշ այդ ուղղութեամբ լի-  
նել չի կարող: Մյուս տեսակետը հետևյալն էր՝ ներկայումս  
բանվորական կուսակցութեան մեջ կա վորոշ խավ, վորը  
դասակարգային տեսակետից խորթ է նրան, բայց ձևակա-  
նորեն ունի բանվորի դրություն. դա գլուղական բուր-  
ժուազիան, քաղաքի առևտրականները և վորոշ զեպերում  
և ծառայողներն են, վորոնք աղբուստի համար հարկազր-  
ված են ծառայել գործարանում: Այդ տարրերի վրա ՌՄԴԲԿ  
կարող է հուշ դնել: Վերջնականապես, պլենումը հանգեց  
այն յեղբակացութեան, վոր հիմնական սոցիալական բողոքն,

վորի վրա կարող է հենվել այժմյան ՌՄԴԲԿ, մանր բուր-  
ժուազիան է: Առաջին հերթին խորհրդային և կուսակերպով  
ծառայողների այն մասը, վորը կապված է անցյալի հետ և  
ներկայումս էլ արագ դուրս է վանվում խորհրդային նոր  
սերնդի կողմից: Խորհրդային ապարատի ծավալվող գտունն  
ստեղծեց այդ տարրերի համար մի այնպիսի դրություն, վոր  
նրանք ՌՄԴԲԿ շարքերը գրավելու համար շատ նպաստա-  
վոր նյութ էին ծառայում: Նույնպիսի նպաստավոր նյութ  
էր և քաղաքային մանր առևտրական բուրժուազիան: Նկա-  
տի ունենալով այս հատուկ հեռանկարները, պլենումում  
հարց ծագեց, թե արդյոք նպատակահարմար չէ կուսակցու-  
թյունը վերանվանել, առաջին հերթին այն իմաստով, վոր  
նրա անվանակոչումից հանել բանվորական անունը: Սա-  
կայն այս հարցը մնաց առկախ, քանի վոր գլխավորապես  
կապված էր ՌՄԴԲԿ միջազգային շարժման հետ, II ինտեր-  
նացիոնալի գծով:

(30 թ. 9/12 ցուցմունքը):

Սրա հետ միասին պլենումը կոնկրետ ցուցումներ էր տվել  
ըստ էություն կատարվելիք աշխատանքի մասին:

«Յուրաքանչյուր կուսակցական բլիշ, բացառում է  
Զալկինգը, բացի գուտ կուսակցական աշխատանքից, պար-  
տավոր էր այս կամ այն ձևով փաստարար աշխատանք կազ-  
մակերպել: Այս նպատակով կուսակցութեան ստորին բլիշ-  
ները պիտի կազմակերպվեյին ըստ հիմնարկությունների:  
Մյուս մոմենտը, վորը բղխում էր այդ դրությունից, դա ա-  
կումբային ստորին բլիշի և փաստարար կազմակերպություն-  
ների միջև սերտ կապ հաստատելն էր: Կուսակցական բլիշի  
անելիքներին փաստարարութեան խնդիրները պիտի առաջին  
հերթին իրագործվեյին: Վնասարար աշխատանք կազմակեր-  
պելու նպատակով, բլիշներին անհրաժեշտ զեպերում, իրա-  
վունք էր վերապահվում իրենց նիստերին հրավիրել մաս-  
նագետներ, խորհրդակցելու համար: Կապը կուսակցական  
առանձին բլիշներին միջև պետք է հաստատվեր վոչ թե յեր-  
կրային հատկանիշով, այլ փաստարար աշխատանքի ընդհա-  
նուր մոմենտների սկզբունքով:

Այս հիմքերի վրա կուսակցական բլիշներ կազմակեր-  
պելու, վերակազմելու պարտականությունները դրված էին

Մոսկովայում Պետպլանում՝ Գրումանի, ԳժՏԽ-ում՝ Օակալովսկու, Առևտրի ժողովումստում՝ Ջալկիցկի, Յենարոսոյսուզում՝ Պետուցիցի, Պետրանկում՝ Շերի և Աշխոտղկոմատում՝ Միցցու վրա: Նախագահությանը առաջարկված եր խիստ միջոցներ ձեռք առնել կազմակերպելու մարդային կոմիտեաներ, տեղերը հատուկ լրագործներ ուղարկելով և հին կապերը ոգտագործելով:

Սուխանովի ցուցմունքի համաձայն նա անձամբ մասնակցել է 20—22 խորհրդակցության, վորտեղ առնվազն տասն անգամ ֆրասարարության և ինտերվենցիայի վերաբերյալ տակտիկական և գործնական դիրեկտիվներ են քննվել: Սուխանովը բերում է ֆրասարարության մեթոդների ու կոնկրետ ձևերի քըննության այս որինակը՝

«1929 թ. գարնանը հացամթերման դժվարությունները հիմք ծառայեցին հարց հարուցել ապագա հացամթերումները հաշվառման լենթարկելու մասին, վորպեսզի հաջորդ 1929—30 թ. հնարավոր լինի հացամթերման պլանները խիստ կերպով կրճատելու: Համապատասխան դիրեկտիվ եր տրված կենտրոնական Վիճակագր. Վարչությունը: Այդ իրագործում եր Գրումանը, մասամբ ՌՄԻԿ-ի կազմակերպություն պատկանող, մասամբ կուսակցությունից դուրս գտնվող, բայց այդ հարցի մասին կուսակցության տեսակետը պաշտպանող անձանց հետ» (Կոնցրեսչեվ, Ագագեովսկի, Ջելիցգեր): Նույն Սուխանովը բացատրում է, վոր «այդ ակար ցանկալի հետևանքներ չունեցավ»: 1930 թ. ոգոտտոսին այդ ֆրասարար գրուցթը յերևան հանվեց: Կենտրոնական վիճակագրության եքսպերտ հանձնաժողովը լուծարքի լենթարկվեց, հացամթերման պլանը ավելացվեց  $\frac{1}{3}$ -ով և իր ժամանակին հաջող կերպով կատարվեց»:

(1931, 22/1—ցուցմունքը):

